

բոլորովին յուսահատածներ՝ անմիջական բժշկութիւն կը գտնեն. կոյրեր՝ որ կը տեսնեն, խուլներ՝ որ կը լսեն, անդամալուծներ՝ որ կը քաշեն իր օրհնութեամբը կամ ձեռքը դնելով անոնց վրայ:

Այս ամէնը, որ հաստատուած է պատմական արձանագրութեամբը օրը օրին, ժամանակակից անձերէն՝ որ զինքը կը շրջապատէին, ինչպէս մեծ մասով Միքայէլ Մէրբի աշխարհէն, անգամ մըն ալ կը փաստեն՝ թէ ինչպէս Աստուած ներկայ է իր ճշմարիտ առաքեալներուն մէջ:

Մահէն վերջն ալ կը շարունակուին հրաշքները եւ կը յաջորդէ փառապսակը:

\* \* \*

Մեր ներկայ ընկերային միջավանջին վերեւ կը հսկէ ուրեմն լուսաշող դէմքը Պիոս Ժ. սուրբին: Այսօր, աւելի քան ուրիշ ժամանակներու մէջ, մարդկութիւնը պէտք ունի գերազանց օրինակներու, որոնք երկնքի թագաւորութեան աննման ճառագայթութեամբ են երկրի վրայ: Անոնք են մեծերը՝ որոնք երկրաւոր մեծութիւններէն վեր կը թեւածեն: Մեծ են, որովհետեւ իմաստութիւնն ունեցած են նիւթին պարունակէն վեր բարձրանալու, և քաջութիւնը՝ օտնակոխելու չարը, կիրքերը: Մեծ են, որովհետեւ կեանքին շօշափելի իրականութիւններէն վեր հոգեկան աշխարհի անփոխարինելի եւ ճշմարիտ գերիրականութեամբը ապրած եւ յաւիտենականի տեսլականովը բարձրացած են այս կեանքի տափակութիւններէն:

Պիոս Ժ., որ եղաւ մեծ Պապ մը, իրրեւ մեծ Սուրբ մը այսօր կ'իշխէ հոգիներու վրայ՝ զորս այնքան բուռն կերպով սիրած էր երկրի վրայ:

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ



## ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1954. Թիւ 3-4, էջ 53)

ԳԼՈՒԽ Զ.

Լեւոն ինֆզիմֆ կը յայտարարէ պաշտպան Կիլիկիոյ — Պատրաստութիւններ գահալաւութեան եւ յաւաքութիւնը:

21. — Մինչ այն՝ Լուսինեանը թափով յառաջ կը վարէր իր քաղաքականութեան կառքը: Նախկին հրատարակութեամբ՝ զոր տեսանք մեր (հ. 19), բաւական ծանօթացած գանազան պետութիւններու, և Գաղղիոյ բարեկամութիւնն ապահոված, Մարտի 2-ին (1862) շրջաբերական մը հանեց՝ ուղղուած Եւրոպայի բոլոր նախարարութիւններուն — շրջաբերական՝ որ զեղումն էր իր գործունէութեան — որուն մէջ Զէյթունի, Կիլիկիոյ, Հաճընի եւ Լարբանտայի հայ ժողովուրդը 487 տարիէ ի վեր անկախ կը ներկայացնէր: Եւ յետ ակնարկելու Հայոց մասնակցութիւնը խաչակրութիւններուն, կը տրտնջէր՝ որ յիշեալ ազատ դաւաճներուն անկախութիւնը զեռ չէ ճանչցուած Եւրոպական պետութիւններէն, և անոնք յարատու ենթակայ կը մնան բարբարոսներու արիւնալից յարձակումներուն: «Այժմ Ես ընդունելով, կ'ըսէ, անոնց հրամանատարութիւնը, ( Երբ եւ որո՞նք տուին ), չեմ վարանիր այդ զիւցազն ժողովուրդին թարգման կանգնել Եւրոպական բոլոր վարչութիւններուն և ամբողջ քրիստոնէութեան առջեւ »: Շարունակելով՝ կը յիշէ իր «նախնիքներէն մէկուն» Զ. Լեւոնի» ժողովուրդին հետ տառնամեայ պաշարումը Կապանի ( ըստ Զամչեանի, իսկ ըստ Գարգելի՝ Սսոյ ) մէջ, որոնց օրինակով ներկայ Տաւրոսցիներն ալ կ'ու-

ղեն անոր ճետին պաշտպանութիւնը իրենց իրաւունքներուն՝ Եւրոպայի ատենին առջեւ: Արեւելքի խաղաղութիւնը կախում ունի Հայաստանի սահմանադրական կառավարութեան ճանաչումէն, ինչպէս ուղեց երբեմն Գաղղիա: Մենք չենք պահանջեր այժմ Կիլիկիոյ մեր հին երկիրը: Անդղիա Եւրոպայի անոր լեռնականներուն անկախութիւնը, ինչ որ Թուրքիա արհամարհեց, և անդղիական կառավարութիւնը բնաւ չբողոքեց: «Ես կը յայտարարեմ հանդիսապէս, յանուն իմ եւ յանուն իմ ժողովուրդիս, թէ որ եւ է պետութեան իշխանութիւն չենք ճանչնար. (ի՞նչ օգուտ քուքի վրայ չնանչնալէն): Հա՞րկ է ըսել թէ Ես իմ բոլոր մը լեռնականներով շատ անգամ վրձնեցի հզօր տէրութեան մը ամբողջ զօրաբաժին մը» (Երբ, ո՞ր, Եւրոպայի՞ մէջ նստած): Եւ կը պահանջէ երեք բան. ճանաչում անկախութեան Զէյթունի եւ միւս յիշեալներուն, Հայոց վերադարձնել Սիսը, և Տարսոնը յայտարարել ազատ քաղաք, որուն նաւահանգիստէն օգտուի հայ կառավարութիւնը(1): Կը վերջացնէ խնդրելով «արագ որոշում մը» տէրութիւններու կողմէ: Եւ կը ստորագրէ սոսկ «Լեւոն», զոր ամէնքը պէտք էին ճանչնալ:

Իրրեւ զիւանագիտական գրուածք՝ կատարեալ էր. խնդիր չէ՝ ո՞րքան իրական էին բոլոր ըսածները. Եւրոպացիներուն վրայ ազդող նիւթեր պէտք էին: Միանգամայն չափաւոր են իր պահանջած պաշտպան սահմանները, որ պէս զի

(1) Ճշմ. 54.

խնդրին լուծումը դերանար, թէպէտ իր ծրագրին մէջ աւելի ընդարձակ էին առնուել, ինչպէս պիտի տեսնենք յետոյ: Մէկ խօսքով՝ մեր իշխանը իր դերին մէջ էր հող: Այդ առթիւ Հիւրմիւլեան Աբբա-հայրը կը գրէ իր եղբոր. «Կորիկոս յղեալ իցէ եւ առ քեզ զյայտարարութիւն իւր անմտական եւ վնասակար, որով հրատա-րակէ զինքն իշխան եւ պաշտպան Տարսու-նի եւ Կիլիկիոյ. այսպէս ի վտանգի դնէ ընդ իւր եւ զայլս» (30 Ապրիլ): Լուսի-նեանը սուր կը ճօճէր՝ նստած աղատ Եւ-րոպայի մէջ. իսկ Հիւրմիւլեան՝ փորձա-ռու եւ հեռատես, դողալով կը նայէր Թուրքիոյ հայութեան զլիւսուն վրայ կախ-ուած սուրին:

Իր շրջաբերականին պատասխանը կը ստանայ Լեւոն երկու մեծ ու կարեւորա-դոյն տէրութիւններէ, — ու թերեւս առնուած միայն, — Անդղիականէն ու Գաղ-ղիականէն: Առաջինը 3 Մայիսի նամակով կը յանձնարարէր «լուծիւն պահել» առնոր բովանդակութեան մասին. լուծիւն՝ որուն իմաստը Անդղիա 1857-էն արդէն զգացուցած էր իրեն (հ. 10), բայց նա հասկնալ չէր ուզած: Եւ բերանը փակ պահեց եօթը ամիս, մինչեւ Ալբիոն միւս կողմը հանդիստ ժամանակ ունեցաւ կար-գի դնելու իր հաշիւները Թուրքիոյ հետ եւ պատրաստելու հայկական խնդրին եղ-ծումը: Մեր իշխանը ընդհակառակն ի նպատակ իր դատին մեկնած էր լուծիւնը, ինչպէս կը պահանջէր անկեղծութիւնը, — բայց ոչ Բրիտանականը. — եւ Սեպտ. 2ին կատարեալ վստահութեամբ կը գրէր Հիւրմիւլեան Աբբահայր. «Ես այլեւս Եւ-րոպայի մէջ զձեզ պիտի չտեսնեմ. այլ զիրար պիտի տեսնենք Կիլիկիոյ մէջ: Որովհետեւ աստուածային նախախնամու-թիւնը ներշնչեց ինձի խորտակել շղթա-ները հայ ազգին, զոր անհաւատ ձեռք մը կը կապէր գերութեան հետ: ... Այս ձեռ-նարկիս մէջ վստահութիւնս դրած եմ Աս-

տուծոյ վրայ, եւ պատրաստ եմ մեռնելու իմ Հայրենիքիս անկախութեան համար»: Գեղեցիկ էր անշուշտ իր հայրենասիրու-թիւնը եւ քաջութիւնը. բայց եկուր տե՛ս որ հուր եւ սուր սկսան յանկարծ աւերը Զէյթունի մէջ, սա 487 տարուան Կորի-կեան անկախութիւնը ջնջելու համար. ու Զէյթունցիներու աղաղակները սթափե-ցուցին զինքը՝ շուտով Կիլիկիան տեսնե-լու անոյշ երազէն: Բացաւ աչքերը եւ Դեկտ. 4-ին նամակ մը փութացուց Անդ-ղիոյ արտաքին դործերու նախարարին, զանդամելով որ իր տէրութիւնը «յետ ե-րաշխաւորելու Կիլիկիոյ լեռնականներու անկախութիւնը, չի պահեր իր յանձնա-ռութիւնը»: Կը բողոքէր Թուրքիոյ սկը-սած խժդժութեանց դէմ « իր բացակա-յութեան ժամանակ » . (բայց ե՞րբ գա-ցած էր հոն): Թէ ինք «Տարսունի աղատ եւ անկախ հայ ազգին կամքով պաշտպան Զէյթունի» ( ե՞րբ տրուեցաւ իրեն այդ դերը ), կը սպասէր Յ. Ռուսիլ Կոմ-սին՝ խորհրդարանի մէջ յիշեալ ջարդերու մասին տալիք բացատրութեան, եւ յետոյ կոչ պիտի ուղղէր հայ ազգին եւ Եւրո-պայի. եւ թէ Զէյթունցիները կը շարու-նակէին պահել իրենց պաշտպանողական դիրքը(2):

Պէտք է ըսենք՝ որ իրականութեան մէջ Լեւոն եւ իր խնդիրը որ եւ է կապ չունէին Զէյթունի հետ, որ այդ պահուն իր դո-յութեան սովորական կոչումներէն մէկը կը մղէր, որուն շատ հաւանորէն պատճառ եղաւ Թուրքիոյ դրդութիւնը Լուսինեանի կողմէ: Եւ մեր իշխանը դիւանագիտական նրբութեամբ յառաջ քաշեց այդ դէպքը, որպէսզի դորացնէր իր պահանջը ընդհա-նուր Կիլիկիոյ վրայ, որ Գաղղիոյ հետ ծածուկ բանակցութիւններու նիւթ էր, ինչպէս նախապէս ալ տեսանք (հ. 19): Արդարեւ ինք իսկ նոյն Դեկտ. 28-ին հե-

(2) Ճշմ. 57.

տեսալ տեղեկութիւնը կու տար Գերալ-Եդ. Հիւրմիւլեանի. « Նարոյէտն կայսրն այս պահուն կ'աշխատի ի նպատակ ինձի, եւ ես կրնամ հաւատալ կայսերական նա-մակին՝ որ ինձի դրկուեցաւ 22 Հոկտեմբ. 1862-ին »: Ասկէ խրախուսուած, Նոյեմբ. 9-ին նամակ մ'ալ ինք կը գրէ արտաքին դործոց նախարարին, իմացնելով՝ թէ «Կ'ընդունիմ հատուցանել տարեկան հարկ մը Թուրքիոյ Սուլթանին՝ Կիլիկիան մեզի չնորհելուն համար, որպէսզի հոն կազ-մենք անկախ պետութիւն մը՝ սահմանա-դրական կառավարութեան մը ներքեւ »: Ապա կ'ըսէ Արքեպիսկոպոսին. «Լաւ պի-տի ընէք զդացնել այս իրողութիւնը Հոռ-մի մէջ մեր բարեկամ Կարդինալներուն, Ս. Հօր բարոյական պաշտպանութիւնն ունենալու համար »:

Սակայն Գաղղիոյ նախարարը լուռ է: Յաջորդ փետր. 3-ին (1863), Լեւոն եր-կորդ նամակ մ'ալ կը գրէ անոր, ըսելով որ Նարոյէտն կայսրը « իրեն իմացուցեր էր՝ թէ Փոքր Հայաստանի մէջ պատահած անցքերու դէմ իր բողոքը անթարկեր էր Զ. Վ. դատաստանին » . եւ թէ իր Նոյ. 9-ի գրածը անպատասխան մնացած է: Ապա անոր կարծիքը կը հարցնէ՝ նկատ-մամբ երկու խնդիրներու. մէկը՝ Կիլի-կիան ազատելու եւ հարկատու ընելու Թուրքիոյ, եւ միւսը՝ Թուրքիոյ հոն բրած վերջին կոտորածներու մասին: Կը չեւտէ Հայաստանի քրիստոնեայ թագաւորու-թեան մը անհրաժեշտ պէտքը եւ կը յարէ հետեւեալ տարօրինակ տեղեկութիւնը. «Լորտ Պարմեստոն, Թուրքիոյ մեծ պաշտպանը, զիտէ այժմ՝ որ ես փառա-խնդիր իշխան մը չեմ, ոչ ալ մոլեռանդ յարձակող մը որ պատերազմ ուղէ Արե-ւելքի դէմ. իմ մերժումս Յունաստանի թագաւոր Ըլլալու՝ ատոր փայլուն ապա-ցոյցն է: Ստուգիւ ես իրաւունք ունիմ յոյն կայսերական գահին՝ զօրութեամբ իմ արեանս. վասնզի իմ նախնիքներէս մէկը,

Լեւոն Գ. արքայ Հայաստանի, Կոստանդ-նուպոլսի վերջին տիրողսաւոր կայսրն եղաւ. ( ո՞րք գրուած է, ի՞նչ իրաւուն-քով, եւ ինչո՞ւ վերջին ): Ես պիտի չըն-դունէի ուրիշ տիրոջ, բայց միայն Յու-նաց կայսեր, սահմանադրական կառա-վարութեան մը ներքեւ եւ պայմանաւ որ յոյն խորհրդարանը Կոստանդնուպոլսը մայրաքաղաք յայտարարէ կայսրութեան ... (իր Հայաստանի քաղաւոր հոգակ-ուելումն ո՞նով, հ. 6): Այս եղաւ պատաս-խանս իմ յոյն բարեկամներուն, եւ լեզուս՝ զոր դործածեցի Սեր. Բուլղարիս նախա-դահին »:

Կը դառնայ Կիլիկիոյ մէջ գործուած խժդժութիւններուն եւ աւերումներուն, որուն պատճառով Զէյթուն ոտքի կը կանգնի, եւ վերջին Օգոստ. 14-ին առնուած չորս հազար հոգի փախուստի կը մատենէ Մարաշի փաշան իր 12 հազարով: Եւ այս բոլորը նախարարին «Բարձր ձե-ռնահասութեան» կը յանձնէ, վերջ տալու համար այդ անհանդուրժելի կացու-թեան(3):

Շատ հետաքրքրական է անշուշտ իրեն առաջարկուած ու մերժուած յունական թագին վերաբերեալ տեղեկութիւնը, որ կը յարմարի 1863-ի արքայական փոփո-խութեան նախընթաց խորհրդակցու-թեանց եւ իր շրջաբերականի ժամանա-կին. եւ որուն որակն ու չափը որոնելի եւ ստուգելի է Եւրոպայի դիւաններուն մէջ:

22. — Իր մօտալուտ Կիլիկիան գահին պատրաստութեանց մէջ պակաս մը չձը-գելու համար՝ Լեւոն կը ձեռնարկէ նաեւ թագաւորական երգին յօրինման: Եւ կը խնդրէ նախ զայն երեւելի հայկաբան Հ. Արսէն Բագրատունիէն, «երգ ազգայնոյ թագաւորի», զոր երգել պիտի տար 63

(3) Ճշմ. 59.

պատրաստ երաժիշտներու. բայց Մխիթարեանները կը զգուշանան ու պատասխան անդամ չեն տար, կ'ըսէ Հիւրմիւզեան Արքայապետը (25 Փետր. 1862): Վեց ամիս վերջ կը դառնայ վերստին խնդրելու (2 Մեպտ.): ապա Երրորդ անգամ մը (21 Մեպտ.), եւ արդիւնքը միշտ նոյն է: Յուսարեկ Ս. Ղազարցիներու լուծեցէն, կը գիմէ Հոռոմ, Գերպ. Եղուարդ Արքեպիսկոպոսին, որպէսզի նա յօրինէ եւ ինք ձայնադրել տայ, ինչ որ «գեղեցկագոյնն ունէր» մը պիտի ըլլար իրեն: Կը յանձնարարէ զգացնել հոն՝ թէ ինք Լուսինեան մըն է, եւ կը փափաքէ՝ որ սկսի այսպէս. «Հայաստան, Աստուած քու պաշտպանդ է»: Եւ կը յարէ թէ «Զէյթուն երթալու ժամանակ» Հոռոմեական պետութեան պիտի անցնիմ, եւ Հոռոմ պիտի տեսնեմ զՁեզ. մանաւանդ որ կ'ուզեմ նաեւ խնդրել Ս. Հօր հայրական օրհնութիւնը» (28 Դեկտ.): Հայ քերթողը նոյնպէս կը մերժէ խնդիրը, չուզելով մտնել քաղաքական խնդիրներու մէջ: Նա կը դառնայ կրկնել, խոստանալով իր անունը ծածուկ պահել (4 Յունուար, 1863). բայց անօգուտ:

Ասոր հետ կը շարունակէ մշակել հայ կարգին մը ունենալու հարցն ալ (հ. 14): 1861-ին խնդրած էր նոյն Գերպ. Եղուարդէն՝ կարգին մը միջոցով յիշեցնել իր խնդրանքը Ս. Պապին (21 Փետր.): Նոյն տարին դարձեալ պնդած էր խնդրին վրայ: Իսկ 1862-ի վերջերը կը գրէ հետեւեալը նոյն անձին. «Կ'երեւի թէ Ս. Աթոռը կ'ուզէ հաւանիլ հայ կարգին մը խնդրանքին. բայց կ'ուզուի՝ որ այս նպատակին համար առաջարկեմ Հասունը. շատ բնական է որ մերժէի այդ պիտի առաջարկութիւն մը»: Ծանօթ է Անտոն Հասունեան պատրիարքին ազգայնոյ վարչութիւնը, որուն վերջ զննելու համար՝ Ս. Գահն օգտակար տեսաւ հանել աթոռէն եւ անոր յանձնել Լուսինեանին

առաջարկած պատիւը (ինչպէս պիտի ըլլար ամէնէն վերջ). բայց նա չէր կարող անշուշտ հաւանիլ իր փափաքին այդպիսի լուծման մը: «Տասը կարգին ալ ունիմ, կը յարէ, օգնելու ինձ՝ որ Ս. Հայրը ընտրէ Գերպ. Եղ. Հիւրմիւզը: Արդ Կարդ. Բառնարդ կը խաբուէր՝ եթէ կը կարծէր յանկարծակի պաշարել զիս» (2 Մեպտ.):

Ուրիշ անգամ մը կը դառնայ կրկնել իր այդ իղձը նոյն արքեպիսկոպոսին. «Հաճելի է ինձի ըսել Ձեզի՝ թէ Դուք կարգին ալ պիտի ըլլաք՝ ինչ ալ պատահի, երկու տարիէն կամ աւելի ուշ, վասնզի այն ժամանակ ես արդէն Կիլիկիա պիտի գլուխդ ունիմ» (28 Դեկտ.): Հուսկ Երրորդ անգամ կը գրէ անոր, այս անգամ իր զիտցած հայերէնով. «Իսկ յազադս կարգին ալ ունիմ՝ Ես Հասունի յետ բան չունիմ. եւ Հայոց թաղաւորն չպիտի լսել օտար ազգի խրատը վասն հայկական կարգին ալ հաստատելոյ: Լեր կարի հաւաստի՝ որ քոյ կարգին ալ ունիմ վայրապար բան չէ, միայն ժամանակս ոչ է պատահաւոր (4 Յունուար, 1863):

23. — Այսպէս Լեւոնի բոլոր երազները կու գան կը խոնին իրարու քով ու միանգամայն կը կասին յանկարծակի 1863-ի սեմին վրայ, որ հիմնովին պիտի յեղաշրջէ անոր կեանքը: Մինչ ինք կազմ ու պատրաստ է Կիլիկիա մեկնելու, իր սեւ բախտը՝ որ զրկեց զինք արդար իրաւունքներէն անգամ եւ տարիներով օրօրեց յոյսերու եւ պատրանքի մէջ, անընկճելի պատուար մ'է կանգնած իր առջեւ ու կ'ըսէ. «Բաւական է, Լուսինեանդ, ցրուէ՛ցնորքներդ եւ իրական կեանքի դարձիր»: Լուծեցէն խաւարը կը ծածկէ իր վերջին ու կթոռ քայլերը, եւ ոչ իր տպած վաւերագրները, ոչ ալ Ս. Ղազարու գիւտընը այլեւս կը խօսին անոնց մասին: Կիլիկիոյ անկախութեան կարմիր պատասխանը տուաւ արդէն Թուրքիա Զէյթունի մէջ՝

Թեւադրութեամբ Անդլիոյ. Գաղղիա կ'ուզէր օժանդակել իրեն, բայց «մեղմովին», այսինքն՝ առանց զէնքի եւ զիւսանալիտական ուղիով, ինչպէս ըսած էր անկեղծօրէն իր դեսպանը Հիւրմիւզեանին (հ. 9), եւ որ նոյնպէս ձախողութեան մատնուեցաւ: Գահնադուրի իշխանի մը պատճառով եւրոպացի բանակներ իրարու եւ թրքականի՞ն հետ պիտի բախէին: Հաւանօրէն այս մասին լսեց նա վճռական ու համոզիչ ձայներ ալ, որ մինչեւ մեզի չհասան:

Պարագային հետ կը զուգարկային իր վերջին խօսքերը առ Գերպ. Եղուարդ. «Ես կ'ապրիմ հոս մեծ առանձնութեան մը

մէջ այն օրէն՝ երբ Ս. Հայրը բանադրեց այս երկիրը: Թաղաւորը շատ անգամ զիս իր մօտ հրաւիրեց, բայց ես բնաւ չգացի» (28 Դեկտ. 1862): Ոչ միայն Իտալիոյ, այլ ամբողջ Եւրոպայի արքունիքներէն եւ կառավարութիւններու իրեն ծանօթ դոնէրէն հետ պիտի մնար այնուհետեւ այդ փառաստեղծիկ եւ ամէն փառքէ զրկուած հոգին, եւ ամփոփուէր անշուք յարկի մը մէջ, իր ընտանեկան վառարանը, իրական կեանքի դպրոցը:

Հ. ՎԱՐԳԱՆ ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

## Լ Ո Ւ Ի Փ Ա Ս Տ Է Օ Ռ

( 1822 – 1895 )

ԻՐ ԿԵԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾԸ

(Շար. Բազմ. 1954, թիւ 6-7, էջ 175)

Ե.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒԱՃՈՒՄՆԵՐԸ

Ռատո-Վալերի շատ արդարօրէն դիտել կու տայ թէ «Երբ Փաստէօն 1873-ին անգամ կ'ընտրուէր Բժշկական Կաճառին ու կազալով ներս կը մտնէր, իր ընկերներէն ոչ մէկը մտքէն անցուց, թէ երկչոտ այդ նորեկը, Բժշկութեան մէջ երբեք չյայտնուած մեծագոյն յեղափոխականը փառքէն հանդիսանար»: Իրապէս ալ, Փաստէօն Կալու, այդ մարդին մէջ, հազարամեակներու երկունքովը ծնած մեծագոյն յեղափոխականը: Շատ մը յեղափոխականներ տեսած է մարդկութիւնը, որոնք կրօնական, բարոյական, ընկերաբանական եւ այլ մարդերու մէջ նոր կեանք, նոր դադափարներ ներմուծած, ու նոր տե-

սիւքներով հրապուրած եւ խանդավառած են մարդկային առաւել կամ նուազ զանդուածները: Բայց անոնցմէ ո'չ մէկը չէ կրցած համամարդկային դարձնել իր քաւրոյած վարդապետութիւնը: Շատ մը վարդապետութիւններ, ժամանակի ընթացքին, իրենց վեհութեան բան մը կորսնցնելով կա'մ ամբողջապէս անհետացած են, կամ զգալիօրէն տկարացած:

Ատոնցմէ բոլորովին տարբեր ճակատագիր ունեցան Փաստէօնի սերմանած դաւադարները: Անոնք, իրենց պարունակած անառարկելի ճշմարտութիւններով, քանդեցին ամբողջ անցեալ մը, ու արժանացան յաւիտեականութեան եւ միադաւանութեան:

Ականաւոր անդղիացի գիտնական մը՝ Թիւտալ՝ Փաստէօնի գիտերէն հրապուրուած, հետեւեալ նամակը կը գրէր անոր.